նշանակություն ունեցող փաստերը, եթե այլ բան նախատեսված չէ սույն օրենսգրքով կամ այլ օրենքներով: Նույն հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ եթե բոլոր ապացույցների հետազոտումից և գնահատումից հետո վիճելի է մնում փաստի առկայությունը կամ բացակայությունը, ապա դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման պարտականությունը կրող անձը:

Պատասխանողի կողմից դատարան ապացույցներ չեն ներկայացվել գնահատող հանձնաժողովի Վիճարկվող գործողությունների հիմքում ընկած հանգամանքների և Հայցվորին ներկայացված գնային առաջարկով հաղթող ճանաչելու մասին կայացված որոշման ընդունման օրենքով, այլ իրավական ակտերով սահմանված կարգը պահպանված լինելու փաստերն ապացուցելու համար:

Դատարանը, գնահատելով գործում եղած ապացույցները, գտնում է, որ հայցը ենթակա է բավարարման:

6. Դատական ծախսերը

Անդրադառնալով դատական ծախսերի բաշխման հարցին՝ դատարանն արձանագրում է հետևյալը.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Հաշվի առնելով, որ հայցվորի կողմից նախապես վճարվել է պետական տուրքի գումարը, իսկ հայցն ենթակա է բավարարման, ուստի Դատարանը գտնում է, որ պետական տուրքի հարցը պետք է համարել լուծված:

Դատարանը, նկատի ունենալով, որ սույն գործի շրջանակներում այլ դատական ծախսերի հետ կապված պահանջ չի ներկայացվել, գտնում է, որ դատական ծախսերի հարցը պետք է համարել լուծված:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 189-րդ, 191-րդ, 192-րդ, 234.5-րդ, 234.12-րդ հոդվածներով՝ Դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց

1. «Էլեն Ավետյան Գևորգի» Ա/Ձ-ի ընդդեմ ՀՀ առողջապահության նախարարության՝ թիվ «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2023/33» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովի 07.07.2023 թվականի թիվ 4 արձանագրության 4-րդ կետով «Էլեն Ավետյան Գևորգի» Ա/Ձ-ին 4-րդ չափաբաժնի մասով հաղթող

ճանաչելու և «Էլեն Ավետյան Գևորգի» Ա/Ձ-ի հետ պայմանագիր կնքելու որոշումը անվավեր ճանաչելու պահանջի մասին, բավարարել:

2. Թիվ «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2023/33» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովի 07.07.2023 թվականի թիվ 4 արձանագրության 4-րդ կետով «Էլեն Ավետյան Գևորգի» Ա/Ձ-ին 4-րդ չափաբաժնի մասնով հաղթող ճանաչելու և «Էլեն Ավետյան Գևորգի» Ա/Ձ-ի հետ պայմանագիր կնքելու մասին որոշումը ճանաչել անվավեր:

3. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

4. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել Վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակվելու օրվանից մեկամսյա ժամկետում:

5. Վճիռը կամովին չկատարելու դեպքում, այն կկատարվի դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության միջոցով, պարտապանի հաշվին:

ԴԱՏԱՎՈՐ՝ **Ա. ՇԻԼԱՋՅԱՆ**